



Փոխըմբռնման հուշագիր Մտավոր սեփականության ոլորտում

**Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության
մտավոր սեփականության գրասենյակի**

և

**Բելառուսի Հանրապետության մտավոր սեփականության ազգային
կենտրոնի միջև**

Բելառուսի Հանրապետության մտավոր սեփականության ազգային կենտրոնը և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակը, այսուհետ՝ Կողմեր,

ցանկանալով նպաստել Բելառուսի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության զարգացմանը,

գիտակցելով մտավոր սեփականության օբյեկտների արդյունավետ պահպանության և նման օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը,

ցանկանալով էլ ավելի ընդլայնել Կողմերի միջև երկկողմ համագործակցությունը՝ մտավոր սեփականության գործող համակարգերի ամրապնդման նպատակով,

գիտակցելով մտավոր սեփականության ոլորտում համակարգված քաղաքականություն վարելու նպատակահարմարությունը,
փոխըմբռնման են եկել հետևյալ հարցերի շուրջ.

Հոդված 1

Սույն Հուշագրի նպատակն է որոշել Կողմերի միջև երկկողմ համագործակցության ոլորտների ուղղությունները՝ վարչական գործընթացները բարելավելու և Կողմերի մտավոր սեփականության համակարգերի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Հոդված 2

Սույն Հուշագիրը ներառում է մտավոր սեփականության ոլորտում համագործակցության հետևյալ ուղղությունները.

տեղեկատվության փոխանակում՝ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պահպանության և այդ օբյեկտների նկատմամբ

իրավունքների պաշտպանության համակարգի զարգացման և կատարելագործման ռազմավարական ուղղությունների վերաբերյալ.

փորձի փոխանակում մտավոր սեփականության օբյեկտների առևտրայնացման իրավական, ֆինանսական և կազմակերպչական մեխանիզմների համակարգի ձևավորման և զարգացման ոլորտում.

տեղեկատվության և փորձի փոխանակում մտավոր սեփականության օբյեկտներին իրավական պահպանության տրամադրման ընթացակարգերի, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման, այդ թվում՝ հայտերի էլեկտրոնային ներկայացման, արտոնագրային հայտերի փորձաքննության ընթացքում իրականացվող որոնումների ժամանակարհեստական բանականության օգտագործման վերաբերյալ.

մտավոր սեփականության ոլորտում կադրերի վերապատրաստման, մասնագիտական վերապատրաստման և անձնակազմի որակավորման բարձրացման ազգային և միջպետական համակարգերի զարգացում, այդ թվում՝ ճանաչողական այցերի, ստաժավորման և վերապատրաստումների կազմակերպման միջոցով.

մտավոր սեփականության հանրային իրազեկման խթանում, իրավական գրագիտության և իրավական մշակույթի ներդրում.

«Մտավոր սեփականությունը Բելառուսում» ամսագրի հանրային իրազեկման խթանում, այդ թվում՝ հայ հեղինակների նյութերի հրատարակման միջոցով.

տեղեկատվության և փորձի փոխանակում մտավոր սեփականության օբյեկտների ստեղծման և օգտագործման խթանման, բուհերում մտավոր սեփականության քաղաքականության ներդրման, տեխնոլոգիական և նորարարության աջակցության կենտրոնների ցանցի զարգացման վերաբերյալ.

Կողմերի պետությունների շահագրգիռ սուբյեկտների տեղեկատվական իրազեկվածության բարձրացման նպատակով համատեղ կոնֆերանսների, սեմինարների և ֆորումների անցկացում.

արտոնագրային հավատարմատարների գործունեության վերաբերյալ տեղեկատվության փոխանակում, մտավոր սեփականության ոլորտում վեճերի քննարկում՝ մտավոր սեփականության օբյեկտների իրավունքների խախտումների արդյունքում պատճառած վնասի գնահատման վերաբերյալ.

Կողմերի կողմից համաձայնեցված համագործակցության այլ տեսակներ:

Կողմերն ազատ են տնօրինելու սույն Հուշագրին համապատասխան տրամադրված ողջ տեղեկատվությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի տեղեկատվություն տրամադրող Կողմը սահմանել է սահմանափակումներ կամ հատուկ պայմաններ դրա օգտագործման կամ տարածման համար:

Հոդված 3

Սույն Հուշագրով նախատեսված համագործակցության հիմնական ոլորտներում կոնկրետ գործողությունները և դրանց իրականացման ձևերը կորոշվեն Կողմերի միջև նամակների փոխանակման միջոցով:

Հոդված 4

Սույն Հուշագրի շրջանակներում համագործակցության համար պահանջվող ֆինանսավորումը կորոշվի յուրաքանչյուր Կողմի կողմից՝ իր հնարավորություններին և փոխադարձ շահերին համապատասխան՝ Կողմերի կողմից համաձայնեցված համագործակցության կոնկրետ ծրագրերին համապատասխան:

Հոդված 5

Կողմերը պարբերաբար կգնահատեն Հուշագրի դրույթների արդյունավետությունը:

Սույն Հուշագրում փոփոխություններն ու լրացումները պետք է կատարվեն գրավոր՝ առանձին արձանագրությունների ստորագրման միջոցով, որոնք կլինեն սույն Հուշագրի անբաժանելի մասը:

Ցանկացած վեճ, որը կարող է ծագել Կողմերի միջև սույն Հուշագրի կիրառման հետ կապված, կլուծվի կողմերի միջև բանակցությունների միջոցով:

Հոդված 6

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Սույն Հուշագիրը կնքվում է 5 տարի ժամկետով և ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդ հինգ տարի ժամկետով, եթե Կողմերից ոչ մեկը գրավոր չի ծանուցում Հուշագրի դադարեցման մասին հաջորդ հնգամյա ժամկետի ավարտից առնվազն երեք ամիս առաջ:

Եթե այլ բան նախատեսված չէ, ռուսերենը օգտագործվում է որպես նամակագրության և հաղորդակցության լեզու:

Ստորագրված է _____ 2022 թվականի _____ երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն՝ ունենալով հավասար իրավական ուժ:

Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանման ժամանակ առաջացած տարաձայնությունների դեպքում նախապատվությունը տրվում է ռուսերեն տեքստին:

**Բելառուսի Հանրապետության
մտավոր սեփականության
ազգային կենտրոնի կողմից**

Վլադիմիր Բյաբովալով
Գործադիր տնօրեն

**Հայաստանի Հանրապետության
Էկոնոմիկայի նախարարության
մտավոր սեփականության
գրասենյակի կողմից**

Քրիստինե Համբարյան
Ղեկավար